

Luys Lnyu®




ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային,
2018-2019թթ., %**




Տնտեսական ակտիվության ցուցանիշը տարեսկզբից ցուցաբերում էր աճի արագացման միտում և հունվար-մայիս ամիսներին կազմել էր 7.3 տոկոս, սակայն հունիսին աճի կուտակային տեմպը դանդաղել է 0.8 տոկոսային կետով՝ հունվար-հունիսին կազմելով 6.5 տոկոս, որը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից ցածր է 2.2 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության նվազման վրա էական ազդեցություն են ունեցել գյուղատնտեսության ոլորտի 7.4% անկումը և էլեկտրաէներգիայի արտադրության 5.5% անկումը, ինչպես նաև շինարարության, առևտրի և ծառայության ոլորտների աճի դանդաղումը: Եթե դիտարկենք հունիսի տնտեսական ակտիվության աճը նախորդ տարվա հունիսի նկատմամբ, ապա այն կտրուկ դանդաղել է մայիսի 12-ամսյա աճի համեմատ՝ կազմելով 3.4 տոկոս, 7.3 տոկոսի դիմաց: Այս դանդաղումը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում տնտեսական ակտիվության աճի դանդաղմամբ:

Նախորդ ամիսներին հրապարակված ՏԱՑ-երի վերանայումները շարունակվել են նաև այս ամիս: Պարզվում է, որ հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ը կազմել է 7.2 տոկոս՝ նախկինում հրապարակված 7.3-ի փոխարեն, իսկ հունվար-մարտինը՝ 6.4% 6.5%-ի փոխարեն:

Տնտեսական ակտիվության ցուցանիշի 6.5% աճին առավելապես նպաստել է ծառայությունների ոլորտը (6.9 տոկոսային կետով): Աճին նպաստել են նաև արդյունաբերության (1.4 տոկոսային կետ), առևտրի (1.1 տոկոսային կետ) և շինարարության (0.3 տոկոսային կետ) համախառն թողարկման իրական աճերը:

Հունվար-հունիս ամիսներին գյուղատնտեսությունը նվազել է 7.4 տոկոսով՝ ՏԱՑ-ին նպաստելով -1.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2019թ. հունվար-մայիս, %




1

*Գյուղատնտեսության ցուցանիշն այսուհետ հրապարակվելու է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ


Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



2019 թվականի հունվար-հունիս ամիսներին արդյունաբերության թողարկման ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 6.9 տոկոսով: 2018թ. նույն ցուցանիշը կազմել էր 3.8 տոկոս: Արդյունաբերության աճը հիմնականում պայմանավորված է մշակող արդյունաբերության աճով (նպաստումը՝ 5.0 տոկոսային կետ), որի կառուցվածքում աճում են գրեթե բոլոր ենթաճյուղերը: Մասնավորապես, նշանակալի են սննդամթերքի արտադրությունը (աճը՝ 7%, նպաստումը՝ 2.0 տոկոսային կետ), ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը (աճը՝ 10.2%, նպաստումը՝ 1.6 տոկոսային կետ), խմիչքների արտադրությունը (աճը՝ 8.2%, նպաստումը՝ 1.1 տոկոսային կետ) և ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը (աճը՝ 24%, նպաստումը՝ 1.1 տոկոսային կետ):

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Շինարարության ծավալի աճի տեմպը 2019թ. առաջին երկու ամիսներին բավական բարձր էր, սակայն դրանից հետո կտրուկ դանդաղեց: Հունվար-հունիսին շինարարության աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 4.7 տոկոս, ինչը 8.8 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը և 1.4 տոկոսային կետով ավելի ցածր, քան հունվար-մայիսի ցուցանիշը: Աճի դանդաղումը հիմնականում պայմանավորված է պետական բյուջեի և օտարերկրյա ներդրողների հաշվին իրականացվող շինարարության ծավալների կրճատմամբ: Հիմնականում նվազել են կրթության, հանքարդյունաբերության, տրանսպորտի, տեղեկատվության և կապի, ինչպես նաև ջրամատակարարման ոլորտներում իրականացվող շինարարության ծավալները²:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Ծառայությունների աճի տեմպը շարունակում է դանդաղել: 2019թ. վեց ամիսների ընթացքում 2018թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ այս ոլորտն աճել է 15.3 տոկոսով, որը 2.8 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա ցուցանիշը (18.1%): Նախորդ ամսվա համեմատ ծառայությունների աճը դանդաղել է 1.2 տոկոսային կետով, ինչը հիմնականում պայմանավորված է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ», ինչպես նաև «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաճյուղերի աճերի դանդաղմամբ³:

² Ճյուղի կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-մայիս ամիսների տվյալների հիման վրա, հունվար-հունիս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

³ Ճյուղի կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է հունվար-մայիս ամիսների տվյալների հիման վրա, հունվար-հունիս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

Միևնույն ժամանակ, ծառայությունների աճի կառուցվածքը զգալի փոփոխությունների չի ենթարկվել: Ծառայությունների աճին ամենամեծ նպաստում ունեցողը շարունակում է մնալ մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտը, որը հունվար-մայիս ամիսների տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 7.2 տոկոսային կետով: Աճին դրական նպաստում են ունեցել նաև ծառայությունների մյուս բոլոր ենթաճյուղերի աճերը, որոնցից նշանակալի են եղել ֆինանսական և ապահովագրական գործունեության (3.8 տոկոսային կետով), տեղեկատվության և կապի (1.1 տոկոսային կետով) ոլորտներում մատուցված ծառայությունների նպաստումները (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ծառայությունների կառուցվածքը և նպաստումները, 2019թ. հունվար-մայիս⁴


	2018, մլն դրամ	2019, մլն դրամ	Կշիռը, 2018թ. %	Աճ, %	Նպաստում, տ.կ.
Ծառայություններ, այդ ովում՝	626,697.2	737,353.5	100.0	116.5	16.5
կաջության և հանրային սննդի կազմակերպում	40,965.6	54,823.5	6.5	132.4	2.1
մշակույթ, զվարճություններ և հանգիստ կրթություն	128,949.1	177,870.2	20.6	134.8	7.2
առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	22,187.3	24,441.9	3.5	108.7	0.3
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	26,666.4	33,261.6	4.3	119.9	0.8
տեղեկատվություն և կապ	22,963.3	24,079.5	3.7	103.7	0.1
տրանսպորտ	95,738.9	103,689.8	15.3	106.9	1.1
վարչարարական և օժանդակ գործունեություն	81,774.3	84,994.3	13.0	102.7	0.4
մասնագիտ., գիտական և տեխ. գործունեություն	26,443.5	28,526.7	4.2	110.7	0.5
ֆինանսական և ապահովագրական գործունեություն	27,441.2	29,036.8	4.4	105.3	0.2
սպասարկման այլ ծառայություններ	141,331.2	164,219.6	22.6	116.9	3.8
	12,236.4	12,409.6	2.0	100.7	0.0

Ծառայությունները թեև շարունակում են մնալ տնտեսական աճին նպաստող հիմնական ճյուղը, սակայն դրանց իրական աճի տեմպը վերջին ամիսներին դրսևորում է կայուն նվազման միտում: Տարեսկզբին ծառայությունների աճն ավելի արագ էր, քան նախորդ տարի, սակայն այժմ պատկերը հակառակն է:

⁴ 2019թ. հունվար-հունիս ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

ԱՌԵՎՏՈՒՐ


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Առևտրի շրջանառության աճի տեմպն ընթացիկ տարվա հունվար ամսին եղել է ավելի բարձր, քան նախորդ տարի, սակայն հաջորդող ամիսների կուտակային աճի տեմպը դանդաղել է: Հունվար-հունիս ամիսներին ոլորտի կուտակային աճի տեմպը կազմել է 8.9 տոկոս, որը 0.9 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, 2018-2019թթ., %⁵



Արտահանման ծավալները շարունակում են դրսևորել անկման տեմպի դանդաղման միտումներ: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում նախորդ

* Ներկայացված են 2019 թվականի հունվար-հունիս ամիսների արտահանման և ներմուծման վերանայված տվյալները:


տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտահանման ծավալը նվազել է 0.5 տոկոսով:

Այս ամիս արտահանման ցուցանիշները զգալի վերանայման չեն ենթարկվել:

Արտահանման ծավալների նվազմանն ամենամեծ նպաստումն է ունեցել հանքահումքային արտադրանքի արտահանման 11.2 տոկոսով կրճատումը, որը ընդհանուր արտահանման անկմանը նպաստել է 3.4 տոկոսային կետով: Նվազել են նաև ոչ թանկարժեք մետաղներ և մանածագործական իրեր ապրանքախմբերի արտահանման ծավալները, որոնք ընդհանուր արտահանմանը նպաստել են համապատասխանաբար -2.4 և -1.2 տոկոսային կետով: Արտահանման աճ է գրանցվել «թանկարժեք մետաղներ», «պատրաստի սնունդ», «բուսական ծագման արտադրատեսակներ» ապրանքախմբերում, որոնց դրական նպաստումն ընդհանուր արտահանմանը կազմել է համապատասխանաբար 4.2, 1.3 և 0.5 տոկոսային կետ: Արտահանման նվազումը պայմանավորված է դեպի ԵՄ երկրներ արտահանման 24.3 տոկոսով նվազմամբ⁵:

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, 2018-2019թթ., %




⁵ Արտահանման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար-մայիս ամիսների տվյալների հիման վրա, քանի որ հունվար-հունիս ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը, նախորդ տարվա բավական բարձր ցուցանիշից հետո, ընթացիկ տարվա սկզբից նվազում է: Սակայն հունվար-հունիս ամիսներին ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ փոքր ինչ աճել են՝ 0.5 տոկոսով: Ներմուծման ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների ներմուծման 24.5 տոկոս աճով և հանքահումքային արտադրանքի 9.2 տոկոս աճով, որոնք ընդհանուր ներմուծմանը նպաստել են համապատասխանաբար 1.7 և 1.3 տոկոսային կետով: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման ծավալները կրճատվել են: Առավել նշանակալի են «սարքավորումներ», «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր և մետաղներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների համապատասխանաբար 13.7 և 11.2 տոկոսով կրճատումը, որոնք ներմուծման ընդհանուր աճին նպաստել են -2.5 և -0.7 տոկոսային կետով:

Ներմուծման ցուցանիշները բավականին վերանայվել են ՀՀ ՎԿ-ի կողմից, ինչի արդյունքում պարզվել է, որ ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին ներմուծման ծավալները կրճատվել էին ոչ թե 0.9, այլ 1.2 տոկոսով:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2018 – 2019թթ., հունվար-հունիս %⁶




2019թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.6 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 6.4 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.9 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 4.0, 1.2 և 4.5 տոկոս: Միջին ամսական անվանական աշխատավարձը

⁶ Աշխատավարձի ցուցանիշները ներկայացված են 1 և ավելի աշխատող ունեցող կազմակերպությունների վերանայված տվյալներով:

կազմել է 176,783 դրամ, ընդ որում՝ պետական հատվածում՝ 149,622 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 191,070 դրամ:

ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները 2018-2019թթ., կուտակային աճը, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)



2019 թվականի հունվար-հունիսին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.4 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների

համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 6.8 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 9.4 տոկոսով:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ


Բյուջեի եկամուտներ

2019 թվականի հունվար-հունիս ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտներն աճել են 25.1 տոկոսով, ընդ որում՝ հարկերը և տուրքերն աճել են 24.5 տոկոսով: Միասնական հաշվի մնացորդը կազմել է 32.5 մլրդ դրամ:

Ըստ նախնական տվյալների՝ հարկային եկամուտների 2019թ. կիսամյակային պլանը գերակատարվել է մոտ 67.9 մլրդ դրամով:

Բյուջեի ծախսեր


Գծապատկեր 11. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրա բաղադրիչների նպաստումները, %



ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2019 թվականի հունվար-հունիս ամիսներին կազմել են 636.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 4.3%-ով, որը պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում նվազել են 25.5 տոկոսով (նպաստումը՝ -1.3 տոկոսային կետ):

Պետական բյուջեի հաշվեկշիռը


Գծապատկեր 12. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2019թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջեն եղել է հավելուրդային, և այն կազմել է 121.9 մլրդ դրամ: Հավելուրդը պայմանավորված է ինչպես ծախսերի թերակատարմամբ, այնպես էլ հարկային եկամուտների զգալի գերակատարմամբ:

Պետական պարտք


Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



2019թ. մայիսի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 6,408.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 4.5 տոկոսով: Պարտքի 76.9 տոկոսը՝ 4,930.9 մլն ԱՄՆ դոլարը, եղել է արտաքին պարտքը: Նախորդ ամսվա (մայիսի վերջի) նկատմամբ կառավարության պարտքը աճել է 29.0 մլն ԱՄՆ դոլարով (0.5%-ով)՝ հիմնականում արտաքին պարտքի աճի հաշվին, իսկ 2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ՝ 35.9 մլն ԱՄՆ դոլարով (0.6%-ով)՝ ներքին պարտքի աճի հաշվին:

Գնաճը


Գծապատկեր 14. 12-ամսյա գնաճ, %



2019 թվականի հունիսին նախորդ տարվա հունիսի նկատմամբ սպառողական գներն աճել են 2.5 տոկոսով՝ նախորդ տարվա 0.9 տոկոսի համեմատ: Վերջին ամիսներին գնաճի փոքր-ինչ արագացումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսական արտադրանքի գների աճով:


Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 15. Ավանդների 12-ամսյա աճը 2018 - 2019թթ., %




2019թ. հունիսին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. հունիսի նկատմամբ կազմել է 17.7 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ավանդների աճի տեմպին (2018թ. հունիսի աճը՝ 8.3%):

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2019թ., %



Ավանդների աճին հիմնականում նպաստել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ 10.5 տոկոսային կետով և տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 6.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 17. Վարկերի 12-ամսյա աճին տնտեսության ճյուղերի նպաստումները, %, 2019թ. հունվար-մայիս⁷



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. մայիսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 13.3 տոկոսով, որին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 6.9 տոկոսային կետով, ինչպես նաև հիպոթեքային

⁷ Հունվար-հունիս ամիսներին վարկերի վերաբերյալ տեղեկատվությունը դեռևս չի հրապարակվել:

վարկերը և ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 2.4 և 2.2 տոկոսային կետով:

Ամփոփելով տեղեկանքը՝ առանձնացնենք մի քանի ուշագրավ դիտարկումներ.

1. Ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսներին ՏԱՑ-ը կազմել է 6.5 տոկոս՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ դանդաղելով 0.8 տոկոսային կետով: Տնտեսական ակտիվության նվազման վրա էական ազդեցություն են ունեցել գյուղատնտեսության ոլորտի 7.4% անկումը և էլեկտրաէներգիայի արտադրության 5.5% անկումը, ինչպես նաև շինարարության, առևտրի և ծառայության ոլորտների աճի դանդաղումը:

2. Ծառայությունները, թեև շարունակում են մնալ տնտեսական աճին նպաստող հիմնական ճյուղը, ունեն աճի տեմպի նվազման միտում վերջին ամիսներին: Հունվար-հունիսին ծառայությունների աճի դանդաղումն ավելի է արագացել՝ կազմելով 1.2 տոկոսային կետ, ինչը հիմնականում պայմանավորված է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ», ինչպես նաև «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ենթաճյուղերի աճերի դանդաղմամբ:

3. Պետական բյուջեի զսպող ազդեցությունը տնտեսության վրա շարունակվում է: Հարկային եկամուտների՝ 2019թ. կիսամյակային պլանը գերակատարվել է մոտ 67.9 մլրդ դրամով: Ձևավորվել է մոտ 121.9 մլրդ դրամ հավելուրդ, մինչդեռ բյուջեով նախատեսվել էր մոտ 78.4 մլրդ դրամ պակասուրդ ունենալ: Ստացվում է, որ հարկաբյուջետային քաղաքականությունը մոտ 200 մլրդ դրամով շեղվել է պլանից: Այս գումարները դժվար թե ծախսվեն մինչև տարեվերջ, հետևաբար մեծ է հավանականությունը, որ տարեկան բյուջեն լինի հավելուրդային: Սա դրականորեն կազդի 2019թ. պարտքի ցուցանիշների վրա, սակայն հետագայում կստեղծի լուրջ վտանգներ տնտեսական աճ ապահովելու տեսանկյունից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: